ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱ-ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց իրական շահառուի բացահայտման ինստիտուտը ներդրվել է 2008 թվականի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենք): ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի 9-րդ հոդվածով սահմանվել են իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ հայտարարությամբ տեղեկությունների տրամադրման դեպքերը՝ հայտարարության տրամադրման կարգի, ձևի և ժամկետների սահմանման իրավասությունը վերապահելով ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին:

2. Համապատասխանաբար, 2009 թ. հունվարի 27-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունվել է «Իրավաբանական անձանց կողմից իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին իրական շահառուների վերաբերյալ հայտարարության օրինակելի ձևը, հայտարարություն ներկայացնելու կարգը և ժամկետները հաստատելու մասին» թիվ 20-Ն որոշումը: Իրավաբանական անձի իրական շահառուի վերաբերյալ հայտարարության ձևի ներկայացման պահանջը 2012 թվականին սահմանվել է նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի (այսուհետ՝ Պետական գրանցման մասին օրենք) 66-րդ հոդվածի 3-րդ մասով: Նշենք, որ վերոթվարկյալ կարգավորումները վերաբերում են Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (այսուհետ՝ Պետական ռեգիստր) գրանցման ենթակա բոլոր տեսակի իրավաբանական անձանց՝ անկախ իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևից և գործունեության ոլորտից:

3. Նշված կարգավորումները նախատեսվել են՝ հիմք ընդունելով Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (այսուհետ՝ ՖԱԹՖ) հանձնարարականների պահանջները: ՖԱԹՖ-ի 24-րդ հանձնարարականով երկրներից պահանջվում է ապահովել իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը, որոնք կարող են ժամանակին ձեռք բերվել իրավասու մարմինների կողմից կամ հասանելի դարձվել նրանց համար:

4. Իրական շահառուների հայտարարագրման ինստիտուտի պահպանմանը զուգահեռ 2019 թվականի ապրիլի 23-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» օրենսգրքում, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ), որն ուղղված է իրական սեփականատերերի թափանցիկության ապահովման անհրաժեշտ կառուցակարգերի և բաց ռեգիստրի ներդրմանը:

5. Նախագծերի փաթեթով առաջարկվել է իրական սեփականատերերի բացահայտման պարտականություն սկզբնական շրջանակում նախատեսել **միայն հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համար**:[1] Որոշվել է, որ հանքարդյունաբերության ոլորտում պիլոտային ծրագրի իրականացումը թույլ կտա վեր հանել համակարգի օրենսդրական և գործնական խնդիրները և դրանց լուծում տալուց հետո համակարգը կիրառել իրավաբանական անձանց ավելի լայն շրջանակի համար:

6. Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական գործընթացը սկսվել է Հայաստանում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (այսուհետ՝ ԱՃԹՆ) ներդրման շրջանակում: ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ ԱՃԹՆ-ի անդամ պետությունները հրապարակեն արդյունահանող ոլորտի իրական սեփականատերերի հանրային ռեգիստր:[2]

---

[1] Պարտականությունը տարածվում է մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցողների և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցողների վրա.

[2] EITI Standard 2019, Requirements for EITI implementing countries, Standard 2.5, <https://eiti.org/document/eiti-standard-2019#r2-5>.

7. ՀՀ արդարադատության նախարարի՝ 2020թ. փետրվարի 5-ի N 36-Ն հրամանով հաստատվել է իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրի ձևը և հայտարարագրի լրացման և ներկայացման կարգը:

8. 2020թ. փետրվար-մարտ ամիսներին օրենքի գործողության ոլորտում հայտնված իրավաբանական անձինք ներկայացրել են իրենց հայտարարագրերը, որոնք հասանելի են դարձվել e-register.am կայքէջում: Ուշացումների որոշ դեպքերի առնչությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

9. 2020թ. մայիսի 12-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի և VXSOFT ընկերության միջև կնքվել է իրական սեփականատերերի բացահայտման ռեգիստրի ծրագրային ապահովման մշակման աշխատանքների մատուցման պայմանագիր Համաշխարհային բանկի՝ «Աջակցություն Հայաստանի ԱՃԹՆ-ին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Աշխատանքները արդյունքում ստեղծվել է իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային հարթակը:

10. Հիմք ընդունելով իրական շահառուների և իրական սեփականատերերի բացահայտումը կանոնակարգող օրենսդրության կիրարկման, պետական ռեգիստր ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության և տարբեր շահագրգիռ խմբերի հետ քննարկումների արդյունքում վեր հանված խնդիրները՝ առաջարկվում է դրանք լուծելուն զուգընթաց ստեղծել իրական սեփականատերերի միասնական ռեգիստր՝ առաջնորդվելով ոլորտում առկա առաջատար միջազգային փորձով:

11. Սույն փաստաթղթում «իրական շահառու» և «իրական սեփականատեր» հասկացությունները ներպետական փորձի տեսանկյունից օգտագործվում են համապատասխանաբար ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով և Պետական գրանցման մասին օրենքով նախատեսված ինստիտուտներին հղում կատարելու համար: Միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից «իրական շահառու» տերմինը օգտագործվում է որպես միասնական հասկացություն:

12. Օրենսդրական տեսանկյունից առկա իրավիճակը ամփոփված է ստորև՝ ըստ կարգավորման առարկա հարցերի:

i. Իրական շահառուներին բացահայտելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը

13. Գործող օրենսդրությամբ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմների ներքո բոլոր իրավաբանական

անձանց համար նախատեսվում է **իրական շահառուների** բացահայտման ընթացակարգ:[3] Սակայն այս համակարգի ներքո ներդրված չեն իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ստուգման արդյունավետ մեխանիզմներ:

14. Միաժամանակ, գործող Պետական գրանցման մասին օրենքով **իրական սեփականատերերի** վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեն մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող իրավաբանական անձինք և մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող իրավաբանական անձինք: Վերջիններս ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ժամկետներում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ներկայացնում են լիազոր մարմին:[4]

ii. Ցուցակված ընկերությունների առանձնահատկությունները

15. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով իրական շահառուների հասկացությունից բացառություն է արված «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով հաշվետու թողարկողների համար:[5] Նույն կերպ Պետական գրանցման մասին օրենքի համաձայն՝ իրական սեփականատերերի բացահայտման պահանջը չի տարածվում «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի համաձայն հաշվետու թողարկող հանդիսացող իրավաբանական անձանց վրա:[6]

16. Նշված օրենքի իմաստով հաշվետու թողարկող է համարվում այն թողարկողը, որի կողմից թողարկված որևէ դասի արժեթղթի[7] առևտուրը թույլատրված է

---

[3] Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 66.

[4] ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված ժամկետներում իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններ բովանդակող քաղվածքը ներկայացվում է լիազոր մարմին, ի թիվս այլնի, հետևյալ դեպքերում՝ երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու, երկրաբանական ուսումնասիրության պայմանագիր կնքելու, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու, ընդերքի տեղամասի կամ դրա մի մասի նկատմամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության իրավունքից հրաժարվելու, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու, և օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարվելու.

[5] ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենք, Հոդված 3 (14) (ա).

[6] Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 26 (23).

[7] «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետով նախատեսվում է, որ արժեթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված արժեթղթերը (անկախ դրա ձևից՝ թղթային կամ ոչ թղթային), այդ թվում՝ բաժնետոմսերը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթերը, պարտատոմսերը և պարտքային այլ արժեթղթերը, բացառությամբ դրամական շուկայի գործիքների, դեպոզիտար ստացականները, արժեթղթերի բաժանորդագրման

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում:[8] Այսպիսով, օրենսդրությունը իրական սեփականատերերի հայտարարագրման պարտականությունից ազատում է ոչ միայն բաժնետոմսերի, այլ նաև օրինակ պարտքային արժեթղթերի հաշվետու թողարկողներին, սակայն սահմանափակվելով միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայով (Հայաստանի ֆոնդային բորսա):

iii. Իրական շահառուի հասկացությունը

17. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի մասով իրական շահառու է համարվում նաև այն ֆիզիկական անձը, որը փաստացի (իրական) հսկողություն է իրականացնում իրավաբանական անձի կամ գործարքի կամ գործարար հարաբերության նկատմամբ, և (կամ) որի օգտին իրականացվում է գործարքը կամ գործարար հարաբերությունը: Իրավաբանական անձի իրական շահառու կարող է համարվել նաև այն ֆիզիկական անձը, որը՝

- *քվեարկելու իրավունքով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 20 և ավելի տոկոսին (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով հաշվետու թողարկողների) կամ իր մասնակցության ուժով կամ իրավաբանական անձի հետ կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշելու դրա որոշումները կամ*
- *հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի կառավարման և (կամ) ղեկավար մարմնի անդամ կամ*
- *գործում է տվյալ իրավաբանական անձի հետ համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:*

18. Պետական գրանցման մասին օրենքի 3-դրդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ իրական սեփականատեր է համարվում այն ֆիզիկական անձը, որը.

կամ ձեռքբերման իրավունքը հավաստող փաստաթղթերը, ներդրումային ֆոնդերի փայերը, բաժնետոմսերը և այլ բաժնային արժեթղթերը, շահույթի բաշխման համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը վկայող փաստաթուղթը, դրամական շուկայի գործիքները, է. ածանցյալ գործիքները, կապիտալի (միջոցների) ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած այլ ներդրումային համաձայնությունը, որը ներառում է վերը նշված արժեթղթերի հատկանիշներն ամբողջությամբ կամ դրանց մի մասը.

[8] «Արժեթղթերի շուկայի մասին» օրենք, Հոդված 3 (1) (14).

- *առանձին կամ փոխկապակցված անձի հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի առնվազն 10 տոկոս մասնակցության, այդ թվում՝ փայերին, բաժնեմասերին, բաժնետոմսերին կամ քվեարկության իրավունքին կամ տվյալ իրավաբանական անձի մասնակից կամ բաժնետեր իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցության առնվազն 10 տոկոս հանրագումարին,*
- *վերահսկում է իրավաբանական անձին կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում մասնակցություն ունենալու փաստի ուժով՝ արտոնյալ բաժնետոմսերի կամ մեկ ձայնից ավելի ձայնի իրավունք տվող քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայի, այսուհետ՝ բաժնետոմս) կամ այլ արժեթղթերի միջոցով,*
- *ստանում է իրավաբանական անձի տարեկան հասույթի առնվազն 15 տոկոսը,*
- *իրավասու է նշանակելու կամ ազատելու իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց,*
- *իրավաբանական անձի կառավարման մարմիններում ընդգրկված չլինելով՝ հնարավորություն ունի ազդելու իրավաբանական անձի կառավարման վրա, վերահսկելու կառավարումը կամ իրավաբանական անձի գործունեությունը կամ իրավասու է կանխորոշելու իրավաբանական անձի որոշումներն այլ միջոցներով, ներառյալ՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի, օպցիոնի պայմանագրի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) փոխարկվող պարտքի տրամադրման պայմանագրի և այլ միջոցներով:*

19. «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին 4.1-րդ կետի համաձայն՝ իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր կամ փոփոխված տեղեկությունների վերաբերյալ քաղվածք ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձանց դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր լրացնելիս իրական սեփականատեր են համարվում նաև տվյալ ընկերության կառավարման միանձնյա և կոլեգիալ մարմինների (բաժնետերերի ժողովի, խորհրդի և գործադիր մարմնի) անդամ ֆիզիկական անձինք, և իրական սեփականատերերի մասով օրենսդրությամբ սահմանված իրավական կարգավորումները տարածվում են նրանց վրա:

iv. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի հասկացությունը և կարգավիճակը

20. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքը քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, նրանց ընտանիքի անդամների կամ նրանց հետ այլ կերպ փոխկապակցված անձանց մասնակցությամբ հարաբերությունները դիտարկում է առավել ռիսկային՝ նախատեսելով այդպիսի հաճախորդների ուսումնասիրության հատուկ կանոններ: Օրենքը բացահայտում է «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը, որն ըստ էության ներառում է օտարերկրյա պետության կամ պետական կազմակերպության բարձրաստիճան պաշտոնյաներին:[9]

21. Պետական գրանցման մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով սահմանված հիմքերով իրավաբանական անձին տիրապետելու, վերահսկելու կամ եկամուտ ստանալու դեպքերում քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության, մասնակցության և եկամտի չափից: Օրենքի իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը ներառում է շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց (բացառությամբ քննիչների) և որոշ հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին:[10] Այսինքն, տարածքային գործողության տեսանկյունից այն սահմանափակվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքով:

---

[9] ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձը՝ արտասահմանյան երկրի կամ տարածքի նախկին կամ գործող բարձրաստիճան պետական պաշտոնատար անձ է, որն իրականացրել կամ իրականացնում է պետական, քաղաքական կամ հանրային բնույթի նշանակալից գործառույթներ: Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի հանրային գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝ ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները, բ. խորհրդարանի անդամները, գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի, դ. աուդիտորների դատարանի անդամները կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամները, ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները, զ. քաղաքական կուսակցության ակնառու գործիչները, է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները.

[10] Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված՝ շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձինք (բացառությամբ քննիչների), Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, վարչապետի, փոխվարչապետների, նախարարների խորհրդականների, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի խորհրդականի, վարչապետի գլխավոր խորհրդականի, հատուկ հանձնարարություններով դեսպանի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև նշված անձանց ընտանիքի անդամները, այն է՝ ամուսինը, անչափահաս զավակը (այդ թվում՝ որդեգրված), նրա խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձը, համատեղ բնակվող յուրաքանչյուր չափահաս անձը.

v. Փոխկապակցված անձանց հասկացությունը և փոխկապակցվածության հետևանքները

22. Պետական գրանցման մասին օրենքը նախատեսում է, որ իրական սեփականատեր է համարվում անձը, ով կազմակերպության կապիտալում ունի 10 տոկոս մասնակցության առանձին կամ փոխկապակցված անձի հետ միասին:[11] Նույն օրենքի իմաստով փոխկապակցված անձ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հանդիսանում է անձի ամուսինը, անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները:[12]

23. Իրական շահառուների բացահայտման տեսանկյունից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքը չի նախատեսում մասնակցության շեմի հաղթահարման նմանօրինակ մեխանիզմ, որը փոխկապակցված անձանց մասնակցությունը կդիտարկեր հանրագումարով:

vi. Մշակվող տեղեկությունների ծավալը

24. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ նախատեսված իրական շահառուների վերաբերյալ մշակվող տեղեկությունների ծավալը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 20-Ն որոշմամբ և ներառում է.

- Հայտարարություն անող անձի անուն ազգանունը և կարգավիճակը,
- Իրական շահառուի անուն, հայրանուն, ազգանունը,
- Ծննդյան ամսաթիվը,
- Քաղաքացիությունը,
- Բնակության վայրը,
- Անձնագրի տվյալները,
- Նշում իրական շահառու հանդիսանալու հիմքերի մասին:

25. Պետական գրանցման մասին օրենքով նախատեսված իրական սեփականատերերի վերաբերյալ մշակվող տեղեկությունների ծավալը սահմանված է նույն օրենքով և ներառում է.

---

[11] Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 3 (23).
[12] *ibid,* Հոդված 3 (27).

- Իրական սեփականատիրոջ անունը ազգանունը (նաև լատինատառ),
- Քաղաքացիությունը,
- Ծննդյան ամսաթիվը,
- Անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- Հաշվառման հասցեն,
- Բնակության հասցեն,
- Աշխատանքի վայրի անվանումը և հասցեն,
- Անուղղակի մասնակցության դեպքում միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները,
- Նշում իրական սեփականատեր հանդիսանալու հիմքերի մասին,
- Նշում փոխկապակցված անձ հանդիսանալու մասին,
- Մասնակցության ուժով իրական սեփականատեր հանդիսանալու դեպքում մասնակցության տոկոսը, բաժնետոմսերի քանակը, ձեռք բերելու ամսաթիվը,
- Իրավաբանական անձի, դուստր և կախյալ ընկերությունների ցուցակման տվյալները,
- Պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության և հսկողության չափը,
- Նշում իրական սեփականատիրոջ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու մասին:

26. Հայտարարագրում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հրապարակված տվյալները հասանելի են անվճար՝ առանց պետական տուրքի վճարման:

vii. Հայտարարագրվող տեղեկությունների արժանահավատության ստուգումը

27. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքի հիման վրա գործող իրական շահառուների համակարգը չի ենթադրում տեղեկությունները հիմնավորող փաստաթղթերի հավաքում և պահպանում ո՞չ Պետական ռեգիստրի, ո՞չ իրավաբանական անձի կողմից:

28. Պետական գրանցման մասին օրենքի հիման վրա գործող իրական սեփականատերերի համակարգը պարունակում է իրավաբանական անձի պարտականությունը իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի առկայության դեպքում հայտարարագրին կից ներկայացնել սեփականության իրավունքը

հավաստող փաստաթղթերը՝ հայերենով կամ վավերացված և հայերեն թարգմանված: Անձանց ինքնության ստուգման մեխանիզմներ ներդրված չեն:

viii. Տեղեկությունների պետական գրանցումը և պարբերական թարմացումները

29. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներքո գործող իրական շահառուների բացահայտման համակարգը նախատեսում է հայտարարության ներկայացման պարտականություն իրավաբանական անձի պետական գրանցման, կանոնադրական կապիտալի կամ մասնակիցների կազմի փոփոխվելու դեպքում:[13]

30. Իրական սեփականատերերի բացահայտման կառուցակարգերով նախատեսվում է, որ բացահայտման պարտականություն ունեցող իրավաբանական անձը յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը, պետական ռեգիստր է ներկայացնում իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագիր, իսկ գրանցված տեղեկությունների փոփոխության դեպքում 40 օրվա ընթացքում իրավաբանական անձը պարտավոր է պետական ռեգիստր ներկայացնել իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները:[14]

ix. Խախտման համար նախատեսվող սանկցիաները և դրանց կիրառումը

31. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության շրջանակներում նախատեսված իրական շահառուների հայտարարություն չներկայացնելու կամ հայտարարության մեջ կեղծ տվյալներ լրացնելու համար պատասխանատվություն նախատեսված չէ:

32. Պետական գրանցման մասին օրենքով հայտարարագիրը կամ իրական սեփականատերերի վերաբերյալ փոփոխված տեղեկությունները չներկայացնելու, կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու դեպքում իրական սեփականատերերի հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող իրավաբանական անձը ենթակա է օրենքով սահմանված պատասխանատվության:[15] Ներկայումս նման պատասխանատվություն նախատեսվել է միայն ՀՀ Ընդերքի օրենսգրքի 30-րդ հոդվածով, որը սահմանում է պատժամիջոցների հետևյալ տեսակները՝

- գրավոր զգուշացում,
- ընդերքօգտագործման իրավունքի կասեցում,

[13] Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 66(3).
[14] *ibid,* Հոդված 26 (22).
[15] Պետական գրանցման մասին օրենք, Հոդված 26 (27).

- ընդերքօգտագործման դադարեցում:

1. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

i. Իրական շահառուներին բացահայտելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը

33. Պետության տարածքում ստեղծվող բոլոր իրավաբանական անձանց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների մշակումը միասնական ռեեստրում խրախուսվում է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից:

34. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների առկայության պահանջն ամրագրված է **ՖԱԹՖ** 24-րդ հանձնարարականով, որը վերաբերում է իրավաբանական անձանց թափանցիկությանը և իրական շահառուներին:[16] ՖԱԹՖ-ի 24-րդ հանձնարարականի բացատրական մեկնաբանություններում նշվում է, որ այս պահանջը պետք է վերաբերի պետության տարածում ստեղծված (հիմնադրված) բոլոր ընկերություններին և այլ իրավաբանական անձանց:[17] Միևնույն ժամանակ նշվում է, որ ընկերություններից բացի այլ իրավաբանական անձանց առնչությամբ բացահայտման պահանջը պետք է տարածել՝ հիմք ընդունելով կոնկրետ կազմակերպաիրավական ձևի հետ կապված փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը և հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:[18]

35. Հայաստանի Հանրապետությունն իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման արդյունավետ համակարգ ունենալու պարտավորություն է ստանձնել նաև **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության** (այսուհետ՝ ՏՀԶԿ) **հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի** շրջանակներում:[19] Ավելին, Հայաստանի Հանրապետության համար

---

[16] FATF, Recommendation 24: Transparency and beneficial ownership of legal persons. «*Երկրները պետք է ապահովեն իրավաբանական անձանց իրական շահառուների և իրավաբանական անձանց նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց վերաբերյալ համարժեք, ստույգ և արդիական տեղեկությունների առկայությունը, որոնք կարող են ժամանակին ձեռք բերվել իրավասու մարմինների կողմից կամ հասանելի դարձվել նրանց համար».*

[17] Interpretive Note to Recommendation 24 (Transparency and Beneficial Ownership of Legal Persons).

[18] *ibid.*

[19] Exchange of Information on Request: Handbook for Peer Reviews 2016–2020, OECD, 3rd edition, 19: «*Պետությունները պետք է ապահովեն, որ ընկերությունների և այլ առևտրային մարմինների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի լինի իրենց իրավասու մարմնին: Սեփականատերը ներառում է իրավաբանական սեփականատերերին և իրական շահառուներին (ներառյալ ցանկացած դեպքում, երբ իրավաբանական սեփականատերը գործում է այլ անձի անունից, որպես անվանատեր կամ այլ համարժեք համաձայնության շրջանակներում, այդ այլ անձին), ինչպես նաև սեփականության շղթայի մեջ գտնվող անձանց».*

իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման պահանջ նախատեսելու հանձնարարական ներառված է նաև **ՏՀԶԿ Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցում**:[20]

36. **ԱՃԹՆ-ի** պահանջների 2.5. (ա) պահանջով խորհուրդ է տրվում, որ ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները վարեն հանրությանը հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձանց իրական շահառուների ռեգիստր՝ ներառյալ իրենց իրական շահառուների ինքնությունները, սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը:[21] ԱՃԹՆ-ի միջազգային ստանդարտով 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահանջվում է, որ ԱՃԹՆ-ն իրականացնող պետությունները հարցում անեն, իսկ ընկերությունները հրապարակայնորեն բացահայտեն իրական սեփականության մասին տեղեկությունները:

37. Համաձայն Փողերի լվացման դեմ պայքարի **Եվրոպական Միության** (այսուհետ՝ ԵՄ) 4-րդ հրահանգի՝ ԵՄ անդամ բոլոր պետություններից պահանջվում է ստեղծել իրական շահառուների ռեգիստր, որտեղ պետք է հավաքագրվի և պահպանվի բավարար, ճշգրիտ և արդիական տեղեկություններ տվյալ երկրի օրենսդրության համաձայն ստեղծված առևտրային և այլ կազմակերպությունների իրական շահառուների վերաբերյալ:[22] Իրական շահառուների ռեգիստրների ներդրումը 4-րդ հրահանգի ներքո ներկայացվող բազմաթիվ փոփոխություններից մեկն է, որի նպատակն է ՓԼ/ԱՖ նպատակներով ֆինանսական համակարգի օգտագործման կանխումը՝ լրացնելով ֆինանսական ոլորտում առկա թափանցիկության բացը:

38. 2018 թվականի փոփոխություններով Փողերի լվացման դեմ պայքարի ԵՄ 5-րդ հրահանգը (այսուհետ՝ <u>ԵՄ հրահանգ</u>),[23] որը անդամ երկրների կողմից պետք է իմպլեմենտացվեր 2020 թվականին, զարգացնում է կենտրոնական ռեգիստրների

---

[20] OECD (2018), Anti-Corruption Reforms in Aremenia Fourth Round of Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, Rec 20(7). «*Ապահովել բենեֆիցիար սեփականության մասին տեղեկությունների աստիճանական և արդյունավետ ներկայացումը. ա) պահանջել իրավաբանական անձանց բենեֆիցիար սեփականության մասին տեղեկությունների ներկայացում* (...)».

[21] EITI Standard 2019, Requirements for EITI implementing countries, Standard 2.5 (a).

[22] Directive (EU) 2015/849 of the European Parliament and of the Council of 20 May 2015, Article 30 (1) <http://data.europa.eu/eli/dir/2015/849/oj>.

[23] Directive (EU) 2015/849 of the European Parliament and of the Council of 20 May 2015, amended by Directive (EU) 2018/843 (hereafter Directive (EU) 2015/849), <http://data.europa.eu/eli/dir/2015/849/2018-07-09>.

գաղափարը՝ նախատեսելով, որ դրանք պետք է լինեն բաց և որոշ տվյալներ հասանելի լինեն հանրությանը:[24]

39. Ամփոփելով՝ պետք է նշել, որ իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման միջազգային չափանիշներին համապատասխանող ռեեստրի ստեղծումը բխում է Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից և համապատասխանում է տարածաշրջանային պետությունների օրենսդրական զարգացման միտումներին: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է.

I. Առկա համակարգերի միասնականացմամբ ներդնել իրական շահառուների բացահայտման նոր համակարգ, որը կգործի Պետական ռեգիստրում գրանցում ստացած բոլոր իրավաբանական անձանց համար,

II. Օրենսդրության համար նախատեսել աստիճանաբար ուժի մեջ մտնելու ժամկետներ՝ առաջնահերթություն տալով ընտրված կարգավորվող (լիցենզավորվող) ոլորտներում գործող և պետական գնումներին մասնակցող ընկերություններին,

III. Հայտարարագրման պարտականության ծագման համար նախատեսել անցումային շրջան մյուս իրավաբանական անձանց (առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների) համար :

[24] *ibid*, Article 30 (5) (c).

ii. Ցուցակված ընկերությունների առանձնահատկությունները

40. Իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հավաքման առնչությամբ ՖԱԹՖ կողմից առաջարկող «Առկա տեղեկությունների մոտեցումը» թույլ է տալիս պետություններին իրական շահառուների բացահայտման հարցում հիմք ընդունել այլ համակարգերում արդեն իսկ հասանելի տեղեկությունները:[25] Այդպես, առավել հաճախ պետությունները հավելյալ հայտարարագրման պարտականություն չեն նախատեսում իրավաբանական անձանց համար, ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններն արդեն իսկ առկա են և հասանելի կարգավորվող շուկաներում, որտեղ ցուցակված են տվյալ ընկերության արժեթղթերը:

41. Նշվածը չի նշանակում, որ ընկերությունները, որոնց արժեթղթերը ցուցակված են կարգավորվող շուկայում չունեն պարտականություն բացահայտելու իրենց իրական շահառուներին: Փոխարենը ենթադրվում է, որ վերջիններիս իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններն արդեն իսկ հասանելի են այլ վայրում:[26]

42. **ԵՄ հրահանգն** իրական շահառուների բացահայտման պարտականությունից բացառություն է նախատեսում կարգավորվող շուկայում ցուցակված ընկերությունների համար (listed companies),[27] որոնց նկատմամբ կիրառելի են միութենական իրավունքի պահանջներին կամ այլ համարժեք միջազգային չափանիշներին համապատասխան բացահայտման այնպիսի պահանջներ, որոնք բավարար կերպով ապահովում են սեփականության վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը:[28]

43. Համարժեք բացառությունն արտացոլված է **Բուլղարիայի**,[29] **Ավստրիայի**,[30] **Գերմանիայի**[31] և այլ անդամ երկրների օրենսդրության մեջ:

44. **Նորվեգիայի օրենսդրությամբ** բացառություն է նախատեսված ընկերության համար, որի կանոնադրական կապիտալում սեփականության իրավունք

---

[25] FATF (2019), Best Practices on Beneficial Ownership for Legal Persons, FATF, Paris, 11, www.fatf-gafi.org/publications/documents/beneficial-ownership-legal-persons.html.

[26] IDB & OECD (2019), A Beneficial Ownership Implementation Toolkit, the Secretariat of the Global Forum on Transparency and Exchange of Information for Tax Purposes, 15.

[27] Գրանցված կազմակերպություն, որը կարող է իր բաժնետոմսերն առաջարկել հանրությանը. (a registered company that can offer its shares to the public), Listed company. (n.d.) Collins Dictionary of Law. (2006). Retrieved August 5 2020 from https://legal-dictionary.thefreedictionary.com/Listed+company

[28] Directive (EU) 2015/849, Article 3 (6) (a).

[29] Bulgarian Act on Measures against Money Laundering (2018), Additional provisions, § 2. (1) (1).

[30] Austrian Financial Market Money Laundering Act (2016), § 2 (3).

[31] German Money Laundering Act (2017), § 3 (2).

տրամադրող արժեթղթերը ցուցակված են Եվրոպական տնտեսական տարածքում (այսուհետ՝ ԵՏՏ) կարգավորվող շուկայում կամ ենթակա են բացահայտման պահանջների, որոնք համարժեք են ԵՏՏ պետության տարածքում գործող կարգավորվող շուկայում ցուցակման պահանջներին:[32] Նույն կերպ **Շվեդիայի օրենսդրությունը,**[33] ինչպես նաև **Միացյալ Թագավորության օրենսդրությունը**[34] նախատեսում են, որ բացառությունը վերաբերում է ընկերություններին, որոնք կարգավորվող շուկայում ցուցակել են ձայնի իրավունք տվող իրենց բաժնետոմսերը:

45. Նույն բացառությունը Նորվեգիայի և Շվեդիայի օրենսդրությամբ տարածվում է նաև ցուցակված ընկերություններին պատկանող դուստր ընկերությունների վրա:

46. Չնայած բացառությունը մեծապես վերաբերում է միայն սեփականության իրավունք տրամադրող արժեթղթերի վաճառքին կարգավորվող շուկայում, որոշ պետություններում բացառությունը վերաբերում է նաև այլ բնույթի արժեթղթերի: Այդպես, **Դանիայի օրենսդրությունը** բացառություն է նախատեսում ընկերությունների համար, որոնց կապիտալում մասնակցությունը հավաստող արժեթղթերը կամ պարտատոմսերը ցուցակված են կարգավորվող կամ համարժեք շուկայում, որտեղ կիրառելի են ԵՄ իրավունքի կամ համարժեք միջազգային չափանիշներին համապատասխանող բացահայտման պահանջներ:[35]

47. **ԱՃԹՆ** պահանջներով նախատեսվում է, որ կարգավորվող շուկաներում ցուցակված ընկերությունները և այդպիսի ընկերություններին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերությունները ոչ թե ամբողջությամբ ազատվեն տվյալներ ներկայացնելու պարտականությունից, այլ ներկայացնեն այն շուկայի անունը, որտեղ ցուցակված է ընկերությունը և հղում շուկայում առկա փաստաթղթերին:[36]

48. Ամփոփելով նշվածը՝ կարելի է արձանագրել, որ ցուցակված ընկերությունների համար բացառություն նախատեսելը համապատասխանում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջազգային չափանիշներին: Նշված մեխանիզմն արդյունավետ է, եթե ցուցակված ընկերության իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկություններն արդեն իսկ հասանելի են այլ վայրում և եթե բացահայտումը համապատասխանում է պետության տարածքում գործող չափանիշներին: Այլ երկրների փորձը վկայում է նրա մասին, որ բացառությունն առավելապես վերաբերում է ընկերություններին, որոնք ցուցակել են

[32] Norwegian Money Laundering Act (2018), §14 (2).
[33] Swedish Act on the Registration of Beneficial Ownership (2017), Chapter 1, Section 2.
[34] UK Companies Act (2006), Section 790B (1).
[35] Danish Public Limited Companies Act (2015), 58a (8).
[36] EITI Standard 2019, Requirements for EITI implementing countries, Standard 2.5 (f) (iii).

իրենց բաժնետոմսերը և այդպիսի ընկերությունների դուստր ընկերություններին: Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է՝

I. Պետական ռեգիստրում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հայտարարագրման պարտականությունը սահմանափակել այն ընկերությունների համար, որոնց <u>բաժնետոմսերը</u> ցուցակված են կարգավորվող շուկայում, որտեղ իրական շահառուների բացահայտման հարցով կիրառելի չափանիշները համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նախատեսված չափանիշներին,

II. Բացառությունը տարածել նաև այդպիսի ընկերություններին պատկանող դուստր ընկերությունների վրա,

III. Նախատեսել նման բացառության տակ հայտնված իրավաբանական անձանց պարտականությունը Պետական ռեգիստր ներկայացնել այն շուկայի անունը, որտեղ ցուցակված է ընկերությունը և հղում շուկայում առկա փաստաթղթերին,

IV. Նախատեսել, որ օրենքով նախատեսված չափանիշներին համապատասխանող բացահայտման պահանջներ ունեցող կարգավորող շուկաների (այդպիսի շուկաներով պետությունների) ցանկը հաստատում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

iii. Իրական շահառուի հասկացությունը

49. Ըստ **ՖԱԹՖ-ի** հանձնարարականների «Բացատրական բառարանի»-ի՝[37] «իրական շահառու» տերմինը վերաբերում է այն ֆիզիկական անձին (անձանց), ով(քեր) հանդիսանում է (են) հաճախորդի և/կամ այն ֆիզիկական անձի, ում անունից կատարվում է գործարքը, վերջնական սեփականատերը կամ նրա նկատմամբ վերջնական հսկողություն իրականացնողը:[38] Տերմինը վերաբերում է նաև այն անձանց, ովքեր վերջնական արդյունավետ հսկողություն են իրականացնում իրավաբանական անձի կամ կազմավորման նկատմամբ:

50. Ընդ որում, ըստ ՖԱԹՖ-ի հանձնարարականներին տեխնիկական համապատասխանության և ՓԼ/ԱՖ համակարգերի արդյունավետության

[37] FATF (2012-2019), International Standards on Combating Money Laundering and the Financing of Terrorism & Proliferation, FATF, Paris, France, 113, www.fatf-gafi.org/recommendations.html.

[38] «Վերջնական սեփականատեր», «վերջնական հսկողություն իրականացնող» և «վերջնական արդյունավետ հսկողություն» ձևակերպումները վերաբերում են այն իրավիճակներին, երբ սեփականությունը/ հսկողությունը իրացվում է սեփականության կամ հսկողության շղթայական մեխանիզմների, այլ ոչ թե ուղղակի հսկողության եղանակով.

գնահատման համար մեթոդաբանության 10.10 չափորոշիչի, որը սահմանում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրության շրջանակներում իրական շահառուների բացահայտման պահանջներ՝ նախատեսված է, որ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում պետք է պահանջվի նույնականացնել իրական շահառուներին և ողջամիտ քայլեր ձեռնարկել նրանց ինքնությունը ստուգելու համար՝ հետևյալ տեղեկությունների միջոցով.

(ա) իրավաբանական անձի կապիտալում վերահսկիչ բաժնեմասի[39] վերջնական սեփականատեր ֆիզիկական անձի (անձանց) ինքնությունը (առկայության դեպքում)[40],

(բ) որևէ այլ միջոցներով իրավաբանական անձի նկատմամբ հսկողություն իրականացնող ֆիզիկական անձի (անձանց) ինքնությունը (առկայության դեպքում), եթե առկա են կասկածներ առ այն, արդյոք վերոհիշյալ «(ա)» կետում նշված՝ իրավաբանական անձի կապիտալում վերահսկիչ բաժնեմասի սեփականատեր ֆիզիկական անձն (անձինք) է (են) իրական շահառուն(երը), կամ եթե որևէ ֆիզիկական անձ իր բաժնեմասի ուժով հսկողություն չի իրականացնում իրավաբանական անձի նկատմամբ, և

(գ) իրավաբանական անձի ավագ ղեկավարի պաշտոնը զբաղեցնող ֆիզիկական անձի ինքնությունը, եթե վերոհիշյալ «(ա)» և «(բ)» կետերում նշված որևէ ֆիզիկական անձի ինքնությունը պարզել չի հաջողվում:

51. **ԵՄ հրահանգի** իմաստով իրական շահառու են համարվում Ֆիզիկական անձինք, որոնց **պատկանում է իրավաբանական անձը կամ ովքեր այն վերահսկում են ուղղակի կամ անուղղակի մասնակցության ուժով** (բավարար բաժնետոմսեր կամ ձայնի իրավունք կամ այլ բնույթի մասնակցության տեսքով) **կամ մասնակցությունից տարբերվող վերահսկման այլ միջոցների ուժով**, բացառությամբ կարգավորվող շուկաներում ցուցակված ընկերությունների:[41]

---

[39] Վերահսկիչ բաժնեմասի առկայությունը կախված է իրավաբանական անձի կապիտալի կառուցվածքից: Այն կարող է հիմնված լինել որոշակի նախատեսված շեմի վրա, օրինակ՝ վերահսկիչ բաժնեմաս ունեցող կարող է համարվել այն անձը, ում պատկանում է ընկերության բաժնետոմսերի որոշակի տոկոսային մասը (օրինակ՝ 25 տոկոսը).

[40] Բաժնեմասերի սեփականության բազմաբնույթ լինելով պայմանավորված՝ հնարավոր է, որ ի վերջո գոյություն չունենան ֆիզիկական անձինք (անհատապես կամ համատեղ գործող), ովքեր իրավաբանական անձի կապիտալում իրենց մասնակցության ուժով հսկողություն են իրականացնում այդ անձի նկատմամբ.

[41] Directive (EU) 2015/849, Article 3 (6) (a) (i).

52. Ընդ որում, 25% գումարած մեկ բաժնետոմս կամ 25%-ից ավել մասնակցությունը հաճախորդի կապիտալում պետք է նշան լինի **բավարար ուղղակի մասնակցության**, իսկ 25% գումարած մեկ բաժնետոմս կամ 25%-ից ավել մասնակցությունը հաճախորդի կապիտալում իրավաբանական անձի կողմից, որը վերահսկում է ֆիզիկական անձը (անձինք) կամ մասնակցությունը իրավաբանական անձանց կողմից, որոնք վերահսկում են նույն ֆիզիկական անձը (անձինք) պետք է նշան լինի **բավարար անուղղակի մասնակցության**:[42]

53. Չնայած անդամ պետություններն ազատ են ընտրել ավելի ցածր մասնակցության ցեմ,[43] ԵՄ երկրներում մեծամասամբ օգտագործվում է հենց 25 տոկոս մասնակցության շեմը:[44]

54. ԵՄ հրահանգը նախատեսում է նաև, որ եթե բոլոր միջոցների օգտագործմամբ անհնար է լինում հայտնաբերել իրական շահառուներին կամ հայտնաբերված անձանց իրական շահառու հանդիսանալը կասկած է հարուցում, ապա իրական շահառու են հանդիսանում **ֆիզիկական անձինք, որոնք զբաղեցնում են բարձր պաշտոն իրավաբանական անձի կառավարման մարմիններում**:[45]

55. Բացահայտման այս տարբերակը, որը նախատեսում է ամեն հաջորդ չափորոշիչով իրական շահառուի բացահայտում նախորդի օգտագործմամբ իրական շահառու չհայտնաբերելու կամ հայտնաբերված անձանց իրական շահառու հանդիսանալու հանգամանքի կասկածներ հարուցելու դեպքում կոչվում է «*կասկադային*» բացահայտում և արտահայտված է վերը նկարագրված ՖԱԹՖ և ԵՄ չափանիշներում:

56. Ընդ որում, ԵՄ հրահանգը նախատեսում է նաև, որ հաշվետվություն տրամադրող անձինք պետք է պահպանեն տեղեկությունները այն միջոցների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են իրական շահառուներին հայտնաբերելու համար:[46]

57. Միջազգային փորձից բխում է, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությամբ նախատեսված իրական շահառուի հասկացությունը օգտագործվում է ոչ միայն այդ օրենսդրության ներքո հաշվետվություն տրամադրող անձանց կողմից իրական շահառուների նույնականացման համար, այլ նաև հենց իրավաբանական անձանց

---

[42] *ibid.*
[43] *ibid.*
[44] Տե՛ս ընդհանուր՝ KPMG International, UBO disclosure requirements within the EU Global Legal Services (as of 1 January 2019).
[45] Directive (EU) 2015/849, Article 3 (6) (a) (ii).
[46] *ibid.*

կողմից իրենց իրական շահառուների ինքնությունը բացահայտելու և նրանց մասին տեղեկությունները հրապարակելու կամ հաշվետվություն տրամադրող անձանց փոխանցելու համար: Նշվածը թույլ է տալիս ապահովել համակարգի միասնականությունը, իսկ նույն չափանիշներով տարբեր մարմինների կողմից հավաքող տեղեկությունները դառնում են համադրելի և հնարավորություն են ստեղծում կիրառել տարբեր տեղեկատվական բազաներում պահվող տվյալների համադրման միջոցով դրանց ճշտության ստուգման մեխանիզմներ (cross-checking):

58. Միջազգային փորձում առանձնահատկություն ունեցող ոլորտ է համարվում հանքարդյունաբերությունը, որտեղ ԱՃԹՆ շրջանակներում պետությունները ստանձնել են թափանցիկության ապահովման այլ չափանիշներ: Նախ ԱՃԹՆ շրջանակներում երկրների կառավարությունները ստանձնում են պարտականություն աշխատելու քաղաքացիական հասարակության և կազմակերպությունների հետ բազմաշահառու խմբի ձևաչափով:[47] Իրական շահառուի հասկացությունը, ըստ չափորոշիչների, պետք է որոշվի բազմաշահառու խմբում կոնսենսուսային համաձայնությամբ և հաշվի առնի միջազգային նորմերը, այլ երկրների փորձը և պետք է ներառի մասնակցության շեմ:[48] Հասկացությունը պետք է նաև նախատեսի քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հայտարարագրման պարտականությունները:[49] Այդպիսով բազմաշահառու խմբի կողմից մշակված հասկացությունը կարող է տարբերվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության չափանիշներից և նախատեսել թափանցիկության ավելի խիստ պարտականություններ, ինչը միևնույն ժամանակ դարձնում է այդ տվյալները դժվար համադրելի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներքո այլ հաստատությունների կողմից հավաքված տվյալների հետ:

59. Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ է նշել, որ «իրական շահառու» հասկացությունը ընդհանուր առմամբ օգտագործվում է այն անձի առնչությամբ, ում պատկանում է իրավաբանական անձը կամ ով այն վերահսկում է: Բավարար մասնակցության կամ վերահսկողության առկայության մասին կարող են վկայել բազմաթիվ հանգամանքներ որոնք կարող են նախատեսված լինել օրենքով, ենթաօրենսդրական ակտերով կամ ուղեցույցներով: Ընդ որում բավարար մասնակցության տեսանկյունից միջազգային չափանիշը պահանջում է 25% շեմի օգտագործում, չնայած պետություններն ազատ են օգտագործել ավելի ցածր շեմ (օրինակ Հայաստանում օգտագործվում է 20% շեմը): Ամեն դեպքում իրական շահառուի միասնական հասկացության օգտագործումը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության և իրավաբանական անձանց հայտարարագրման համակարգի

[47] EITI Standard 2019, Requirements for EITI implementing countries, Standard 2.5 (f) (i).
[48] *ibid,* Standard 2.5 (f) (ii).
[49] *ibid.*

համար, թույլ կտա ապահովել համադրելի տվյալների մշակումը տարբեր պետական և մասնավոր հաստատությունների կողմից և իրականացնել այդ տվյալների արդյունավետ ստուգում համադրման միջոցով: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է՝

I. *Օրենսդրության մեջ արտացոլել իրական շահառուների տվյալների բացահայտման ՖԱԹՖ և ԵՄ կողմից առաջարկվող կասկադային մեթոդը,*

II. *Պետական ռեգիստրում ստեղծել իրական շահառուների ռեեստր, որը կգործի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով նախատեսված «իրական շահառու» հասկացության հետ միասնական հիմունքների վրա:*

III. *Հաշվի առնելով ԱՃԹՆ-ի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները՝ ապահովել հանքարդյունաբերության ոլորտում «իրական շահառու» հասկացության օգտագործումը բազմաշահառու խմբի կողմից որոշված իմաստով և մասնակցության շեմով:*

iv. Քաղաքական ազդեցություն ունեցող անձի հասկացությունը և կարգավիճակը

60. **ՖԱԹՖ-ի** 12-րդ հանձնարարականը պահանջում է, որ բացահայտվի հաճախորդի (հաճախորդ իրավաբանական անձի իրական շահառուի) քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու հանգամանքը: Նշված պահանջը պայմանավորված է նրանով, որ կոռումպացված քաղաքական ազդեցություն ունեցող անձինք հաճախ, իրական շահառու հանդիսանալով, օգտագործում են իրավաբանական անձանց իրենց ինքնությունը և գործարքի հետ իրենց կապը թաքցնելու համար:[50]

61. Նշված պահանջն արտահայտված է նաև **ԵՄ հրահանգի** 20-22-րդ հոդվածներում: Ընդ որում, բացահայտման պահանջները վերաբերում են ոչ միայն քաղաքական ազդեցություն ունեցող անձին, այլ նաև նրա ընտանիքի անդամներին և նրա հետ սերտ փոխկապակցված անձանց:

62. ԵՄ հրահանգով նախատեսվում է, որ անդամ երկրները պետք է ապահովեն, որ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հետ գործարար հարաբերությունների դեպքում ձեռնարկվեն առնվազն հետևյալ միջոցները. (i) ստացվի ավագ ղեկավարության համաձայնությունը այդպիսի անձի հետ գործարար

[50] FATF Guidance politically exposed persons (Recommendations 12 and 22) June 2013, para 32.

հարաբերություններ հաստատելու կամ շարունակելու համար, (ii) ձեռնարկվեն արդյունավետ միջոցներ պարզելու համար ակտիվների և ֆինանսավորման աղբյուրները, որոնք օգտագործվում են գործարար հարաբերություններում կամ գործարք կնքելիս, (iii) իրականացվի այդպիսի գործարար հարաբերությունների հավելյալ, ընթացիկ մշտադիտարկում:[51]

63. Նշված միջոցները ձեռնարկելու համար նախ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք իրավաբանական անձ հաճախորդի իրական շահառուն հանդիսանում է քաղաքական ազդեցություն ունեցող անձ:

64. ԵՄ հրահանգի իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» են համարվում, անձինք, որոնք հանդիսանում են կամ հանդիսացել են՝

ա. պետության ղեկավարներ, կառավարության ղեկավարներ, նախարարներ և նախարարի տեղակալներ,
բ. խորհրդարանի կամ այլ համարժեք օրենսդիր մարմնի անդամներ,
գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների անդամներ, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքների,
դ. աուդիտորների դատարանի անդամներ կամ կենտրոնական բանկի խորհրդի անդամներ,
ե. դեսպաններ, գործերի հավատարմատարներ և զինված ուժերի բարձրաստիճան սպաներ,
զ. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամներ,
է. միջազգային կազմակերպության խորհրդի կամ համարժեք գործառույթներ իրականացնող մարմնի տնօրեններ, փոխտնօրեններ կամ անդամներ:

65. Անձը որպես կանոն շարունակում է համարվել «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» պաշտոնավարումը դադարելուց հետո:

66. Ընդ որում, հաճախ ընտրում է նաև պետական մարմին, ում վրա դրվում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված իմաստով «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հանդիսացողների ցանկը վարելու և այլ մարմիններին հասանելի դարձնելու պարտականությունը: Օրինակ **Գերմանիայի օրենսդրությունը**

[51] Directive (EU) 2015/849, Article 20 (b).

այդպիսի պատասխանատվություն է նախատեսում Ֆինանսների նախարարության համար: [52]

67. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով տրված հասկացությունը մեծապես համապատասխանում է միջազգային չափանիշներին, բացառությամբ երկու հանգամանքի:

68. Նախ, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով օգտագործվող հասկացությունը չի ներառում ներպետական քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, ինչը խնդրահարույց է որակվել 2015 թվականի՝ Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի փորձագետների կողմից ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 5-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ,[53] ինչպես նաև 2018 թվականի՝ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից ՀՀ ֆինանսական համակարգի կայունության գնահատման հաշվետվությամբ:[54]

69. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենքով օգտագործվող «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը ծավալների տեսանկյունից խնդրահարույց է համարվել նաև միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան աշխատակիցների առնչությամբ :[55]

70. Ինչ վերաբերում է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ընտանիքի անդամներին և նրանց հետ սերտ փոխկապակցված անձանց, ապա ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված միջոցները միջազգային չափանիշներին համապատասխան կիրառվում են նաև անձանց այդ խմբի առնչությամբ: Միևնույն ժամանակ, այլ երկրների փորձը վկայում է նրա մասին, որ իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրման համակարգում իրական շահառուների՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու հանգամանքի պարզման պարտականությունը չի դրվում իրավաբանական անձանց վրա: Կարելի է ենթադրել, որ պետական մարմինները և հաշվետվություն տրամադրող անձինք, ում արդեն իսկ պետք է հասանելի լինի քաղաքական ազդեցություն ունեցող անձանց ցանկը, իրենք կարող են հայտարարագրված իրական շահառուների ցանկում նույնականացնել քաղաքական ազդեցություն ունեցող անձանց՝ առանց իրավաբանական անձի վրա հավելյալ պարտականություն դնելու անհրաժեշտության:

---

[52] Germany Money Laundering Act, § 1 (12).

[53] MONEYVAL, Anti-money laundering and counter-terrorist financing measures Armenia Fifth Round Mutual Evaluation Report December 2015, 132, para 142.

[54] International Monetary Fund. Monetary and Capital Markets Department, Republic of Armenia: Financial Sector Assessment Program-Press Release; Staff Report; and Statement by the Executive Director for the Republic of Armenia, December 2018, 58, core principle 28.

[55] MONEYVAL, Anti-money laundering and counter-terrorist financing measures Armenia Fifth Round Mutual Evaluation Report December 2015, 132, para 142.

71. Փոխարենը, իրավաբանական անձանց իրական շահառուների քաղաքական ազդեցություն ունենալու վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը պետությունները որպես կանոն ապահովում են ոչ թե իրավաբանական անձանց կողմից իրենց իրական շահառուների բացահայտման, այլ պաշտոնատար անձանց հայտարարագրման համակարգերի միջոցով:

72. Այդպես օրինակ՝ **Ուկրաինայի օրենսդրությունը** նախատեսում է, որ պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրման են ենթակա նաև իրավաբանական անձանց, թրասթների կամ այլ կազմակերպությունների մասին տեղեկությունները, որոնց իրական շահառուն (վերահսկողը) հայտարարագիր լրացնողն է կամ նրա ընտանիքի անդամները:[56] Ընդ որում, իրական շահառու հասկացությունն օգտագործվում է ՓԼ/ԱՖ օրենսդրությամբ սահմանված իմաստով:[57]

73. Պաշտոնատար անձանց հայտարարագրման տեսանկյունից համարժեք պարտականություններ նախատեսված են նաև **Լատվիայի,**[58] **Վրաստանի,**[59] **Սլովենիայի**[60] և այլ երկրների օրենքներով:

74. Ամփոփելով նշվածը, կարելի է պնդել, որ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը մեծապես համապատասխանում է միջազգային չափանիշներին: Մյուս կողմից, իրական շահառուի՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու հանգամանքը կարող է գնահատվել պետական մարմինների և հաշվետվություն տրամադրող անձանց կողմից՝ առանց իրավաբանական անձի վրա համապատասխան կարգավիճակի մասին տվյալներ հայտարարագրելու պարտականություն դնելու, եթե քաղաքական ազդեցություն ունեցող անձանց արդիական ցանկը հասանելի լինի շահագրգիռ սուբյեկտներին: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է.

> ***I. Համապատասխանեցնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին օրենքով նախատեսված «քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը կիրառելի միջազգային չափանիշներին,***[61]

---

[56] Ukranian Law about prevention of corruption (2014), Article 46 (5.1).
[57] *ibid.*
[58] Закон о предотвращении конфликта интересов в деятельности государственных должностных лиц (2002), Статья 24 (9.1).
[59] Закон о несовместимости интересов и коррупции на публичной службе (1997), Статья 15 (и).
[60] Slovenian Integrity and prevention of corruption act (2010), Article 42(1).
[61] Նշված առաջարկն իրագործվում է Կենտրոնական բանկի կողմից նախագծված օրենքների այլ փաթեթի շրջանակներում.

II. Հրաժարվել իրավաբանական անձանց վրա իրենց կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեցող քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հայտնաբերելու պարտականություն դնելու մոտեցումից, փոխարենը իրավաբանական անձանց իրական շահառու բացահայտումն ապահովել պաշտոնատար անձանց շահերի հայտարարագրի շրջանակներում:[62]

v. Փոխկապակցված անձանց հասկացությունը և փոխկապակցվածության հետևանքները

75. Իրական շահառուների բացահայտման ոլորտում նմանօրինակ կարգավորումները չեն կազմում ընդունված միջազգային չափանիշների մաս: Ամեն դեպքում, անձինք, որոնց մասնակցությունը չի գերազանցում օրենքով նախատեսված որոշակի շեմը, բայց որոնք կարող են ընկերությունը վերահսկել իրենց հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կարող են դիտարկվել իրական շահառու ոչ միայն մասնակցության, այլ նաև վերահսկման չափանիշով:

76. Քիչ պետությունների օրենսդրություններ են պարունակում կարգավորումներ փոխկապակցված անձանց մասնակցության վերաբերյալ: Այդպես օրինակ, **Շվեդիայի օրենսդրությունը** պարունակում է իրական շահառուի հասկացությունը, բայց նաև առանձին կարգավորում ըստ որի՝ ենթադրվում է, որ ֆիզիկական անձը իրականացնում է վերահսկողություն իրավաբանական անձի նկատմամբ, եթե նա, մեկ կամ մի քանի փոխկապակցված անձանց հետ միասին, կարող է վերահսկել իրավաբանական անձը: Փոխկապակցված են համարվում անձի ամուսինը, գրանցված զուգընկերը, համատեղ բնակվող զուգընկերը, երեխաները և նրանց ամուսինը, գրանցված զուգընկերը, համատեղ բնակվող զուգընկերը, և ծնողները:[63]

77. **Բելգիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ իրական շահառու է հանդիսանում, ի թիվս այլ դեպքերի, բավարար ձայների իրավունք ունեցող անձը կամ անձինք: Օրենքը նախատեսում է, որ բավարար անուղղակի մասնակցության առկայության մասին է վկայում օրինակ, երբ 25 տոկոսից ավել մասնակցությունը պատկանում է կազմակերպությանը, որը վերահսկվում է մեկ կամ մի քանի ֆիզիկական անձանց կողմից կամ մի քանի կազմակերպության կողմից, որոնք վերահսկվում են նույն ֆիզիկական անձի կամ անձանց կողմից:[64] Հայտարարագրում

---

[62] «Հանրային ծառայության մասին» օրենք, Հոդված 42(1).
[63] Swedish Act on the Registration of Beneficial Ownership (2017), Chapter 1, Section 5.
[64] Loi relative à la prévention du blanchiment de capitaux et du financement du terrorisme et à la limitation de l'utilisation des espèces, Article 4 (27).

իրական շահառուի վերաբերյալ կատարվում է նշում առանձին կամ այլ անձանց հետ կոորդինացված մասնակցության մասին,[65] իսկ մասնակցությունը համարվում է խմբային, եթե.

- Ֆիզիկական անձինք գործում են համաձայնեցված՝ պաշտոնական կամ ենթադրվող, գրավոր կամ բանավոր համաձայնության հիման վրա՝ կազմակերպության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով,
- Ֆիզիկական անձինք կնքել են համաձայնագիր իրենց ձայնի իրավունքը համաձայնեցված իրացնելու վերաբերյալ, այնպես որ քաղաքական ուղղությունների վերաբերյալ որոշումները չեն կարող ընդունվել առանց նրանց միասնական համաձայնության:[66]

78. Այս բնույթի կարգավորումներն, ի տարբերություն Պետական գրանցման մասին օրենքով նախատեսված կարգավորումների, ավելի ճկուն են և չեն սահմանափակում անձանց փոխկապակցվածության դիտարկումը միայն հարազատական կապերի լույսի ներքո:

79. Ամփոփելով նշվածը՝ կարելի է արձանագրել, որ փոխկապակցված անձանց հետ միասին մասնակցությունը միջազգային պրակտիկայում չի կազմում իրական շահառուի հասկացության մաս, սակայն չի բացառվում, որ փոխկապակցվածությունը կարող է դիտարկվել, որպես իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորության մասին վկայող հանգամանք: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է՝

I. Մասնակցության ուժով իրական շահառու հանդիսանալուն առնչվող կարգավորումներում չնախատեսել փոխկապակցված անձանց մասնակցության հանրագումարի հաշվարկման պահանջ,

II. Իրական շահառու հանդիսանալու կանխավարկած նախատեսել, եթե անձն իրական շահառու հանդիսանալու չափանիշները բավարարում է իր հետ փոխկապակցված (հարազատական կապերի մեջ գտնվող կամ համաձայնեցված գործող) անձանց հետ:

vi. Մշակվող տեղեկությունների ծավալը

80. ԵՄ հրահանգի 30-րդ հոդվածն անդամ պետությունների համար նախատեսում է իրական շահառուների կենտրոնական ռեգիստր ստեղծելու պահանջ, որտեղ

[65] 30 juillet 2018 - Arrêté royal relatif aux modalités de fonctionnement du registre UBO, Article 3 (12).
[66] FAQ : Registre UBO Mis à jour au 19 juillet 2019, 10.

պահվող տեղեկությունների առնվազն հետևյալ ծավալը պետք է լինի հասանելի հանրությանը. իրական շահառուի անունը, ծննդյան տարին և ամիսը, կացության պետությունը և քաղաքացիությունը, ինչպես նաև իրական շահառու հանդիսանալու հիմքերի բնույթը և ծավալը:[67] Անդամ պետությունները կարող են ընտրել իրենց ազգային գրանցամատյաններում պահվող տեղեկությունները հասանելի դարձնել առցանց գրանցման և տուրքի վճարման պայմանով, որը չպետք է գերազանցի տեղեկությունները մատչելի դարձնելու վարչական ծախսերը, ներառյալ ռեգիստրի պահպանման և զարգացման ծախսերը:[68] Սահմանափակ հասանելիության տվյալներ կարող են դիտվել ծննդյան օրը և կոնտակտային տվյալները: Առանձին դեպքերում տվյալները կարող են պաշտպանվել, եթե դրանց բացահայտումը կարող է վտանգել անձի կյանքը կամ առողջությունը կամ այն դեպքերում, երբ իրական շահառուն անչափահաս է:[69]

81. Իրական սեփականատերերի վերաբերյալ հավաքվող տվյալների ծավալը ԵՄ երկրներում առավել հաճախ հանգում է հետևյալին՝

- Անուն և ազգանուն,
- Ծննդյան օր, ամիս, տարի,
- Քաղաքացիություն,
- Բնակության երկիր և հասցե,
- Իրական շահառու դառնալու ամսաթիվը (որոշ երկրներում),[70]
- Անձը հաստատող փաստաթղթի տվյալները,
- Իրական շահառու հանդիսանալու հիմքը (հիմքերը),
- Առանձին կամ այլ անձի հետ համատեղ չափանիշները բավարարելու մասին նշում (որոշ երկրներում),[71]
- Մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին նշում,
- Անուղղակի մասնակցության դեպքում միջանկյալ կազմակերպությունների տվյալները (որոշ երկրներում),[72]
- Մասնակցության ուժով (ուղղակի կամ անուղղակի) իրական սեփականատեր հանդիսանալու դեպքում մասնակցության տոկոսը:

82. Քիչ թվով պետություններ կարգավորում են նաև պետությունների, համայնքների և միջազգային կազմակերպությունների մասնակցության դեպքերը: Այդպես, **Միացյալ Թագավորության օրենսդրությունը** նախատեսում է, որ իրական

[67] Directive (EU) 2015/849, Article 30 (5).
[68] *ibid*, Article 30 (5a).
[69] *ibid,* Article 30 (6).
[70] Օրինակ՝ Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Բելգիա.
[71] Օրինակ՝ Բելգիա.
[72] Օրինակ՝ Բուլղարիա, Բելգիա.

շահառուների բացահայտման կանոնների համատեքստում հետևյալ սուբյեկտները դիտարկվում են իբրև ֆիզիկական անձինք՝

- Մեկ ֆիզիկական անձի մասնակցությամբ կազմակերպությունը,
- Պետության կամ տարածքի կառավարությունը կամ դրա ստորաբաժանումը,
- Միջազգային կազմակերպությունը, որին անդամակցում են երկու կամ ավելի պետություն,
- Տեղական ինքնակառավարման մարմինը կամ տարածքային կառավարությունը Միացյալ Թագավորությունում կամ այլուր:[73]

83. Ընդ որում, որոշ երկրներում հավաքագրվող տեղեկությունների ծավալն ամբողջությամբ (օրինակ՝ Բուլղարիայի օրենսդրությամբ) կամ ընդհանուր գծերով (օրինակ՝ Գերմանիայի կամ Նորվեգիայի օրենսդրությամբ) սահմանվում է օրենքով, իսկ որոշ երկրներում այն ամբողջությամբ սահմանվում է ենթաօրենսդրական ակտերով (օրինակ՝ Շվեդիայի կամ Բելգիայի օրենսդրությամբ):

84. Ամփոփելով նշվածը՝ կարելի է նկատել, որ Պետական գրանցման մասին օրենքով նախատեսված տվյալների ծավալը մեծապես համապատասխանում է միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ, անձնական տվյալներից բացի, այլ բնույթի տեղեկությունների հավաքման ծավալները ենթաօրենսդրական ակտով կարգավորելը կարող է ապահովել ճկունություն տվյալների հավաքման ձևաչափի փոփոխման տեսանկյունից: Ինչ վերաբերում է հրապարակվող տվյալներին, ապա միջազգային փորձը վկայում է, որ որոշ բացառություններ կարող են հետապնդել օրինաչափ նպատակ ինչպիսին է անձի կյանքի և առողջության կամ անչափահասների ինքնության պաշտպանությունը: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է.

I. Օրենքով նախատեսել անձնական տվյալների ծավալը, որը ենթակա է մշակման Պետական ռեգիստրի կողմից՝ այլ տվյալների մասերով մանրամասն կարգավորումը թողնելով ենթաօրենսդրական ակտերի մակարդակում,

II. Հայտարարագրման ենթակա տվյալները, հայտարարագրի ձևը և լրացման կարգը սահմանել Արդարադատության նախարարի հրամանով,

III. Պարտադիր հրապարակման ենթակա նվազագույն տվյալները նախատեսել օրենքում՝ մնացած մասով ապահովելով միայն իրավասու մարմինների և շահագրգիռ խմբերի հասանելիությունը,

[73] UK Companies Act (2006), Section 790C (12).

IV. Նախատեսել տվյալների հրապարակային հասանելիության սահմանափակում, եթե տվյալները վերաբերում են անչափահաս անձի:

vii. Հայտարարագրվող տեղեկությունների արժանահավատության ստուգումը

85. Տեղեկությունների արժանահավատության ստուգումը ենթադրում է երկու բնույթի գործողություններ՝

- Անփութության արդյունքում անորակ տվյալների մուտքագրման և հրապարակման բացառում,
- Կեղծ տվյալների մուտքագրման և հրապարակման բացառում:

86. Առաջինը հնարավոր է ապահովել տեխնիկական միջոցների կիրառմամբ, օրինակ՝ էլեկտրոնային համակարգի օգտագործմամբ, որն, օրինակ, արգելում է գումարային 100%-ը գերազանցող արժեքների, գոյություն չունեցող հասցեների և ամսաթվի մուտքագրումը: Էլեկտրոնային համակարգերը նաև լավ միջոց են տեղեկությունների ինքնաշխատ համադրման և սխալների հայտնաբերման դեպքում ազդակների արձանագրման համար:[74]

87. Երկրորդը հնարավոր է իրականացնել նախնական և հետագա ուսումնասիրությունների շնորհիվ: Նախնական ուսումնասիրությունը հաճախ ենթադրում է առնվազն անձի գոյության և նրա անձնական տվյալների ճշտության ստուգում: Այդպես, Պետական ռեգիստրում ՀՀ քաղաքացիների գրանցման դեպքում նրանց ինքնությունը և հաշվառման հասցեն ստուգվում են այլ պետական մարմինների կողմից պահվող տվյալների բազաների հետ համադրմամբ, իսկ օտարերկրյա անձանց ինքնությունը ստուգելու համար օգտագործում են անձը հաստատող փաստաթղթի նոտարական վավերացման մեխանիզմները: Ռեգիստրը նաև ստուգում է այն անձի ինքնությունը, ով ներկայացնում է փաստաթղթերը, ինչը նույնպես կարևոր քայլ է ռեգիստրում պահվող տեղեկությունների ճշտությունը ապահովելու ուղղությամբ:[75] Նախնական ստուգման նույն մեխանիզմները հնարավոր է կիրառել իրական շահառուների գրանցման շրջանակներում:

88. Ամփոփելով միջազգային լավագույն փորձը՝ **ՖԱԹՖ** զեկույցում նշվում է, որ տեղեկությունների ստուգման լավագույն միջոցներից է տեղեկությունների համադրումը (**cross-checking**), ինչը ենթադրում է ստուգման միջոցներ, որոնք հիմնվում են տարբեր հաստատությունների կողմից մշակվող տեղեկությունների համադրման վրա (օրինակ ֆինանսական հաստատությունները և ոչ ֆինանսական

[74] Open Ownership, Verification of Beneficial Ownership Data, Policy Briefing, May 2020, 8.
[75] *ibid*, 6.

հաստատությունները, ինչպես նաև հարկային մարմինները կարող են համեմատել իրենց տրամադրվող տեղեկությունները ռեգիստրում պահվող տեղեկությունների հետ) :[76] Ավելին, հաշվետվություն ներկայացնող անձինք (ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունները) կարող են շարունակաբար հետևել ռեգիստրում պահվող տեղեկությունների փոփոխմանը, այդ թվում՝ խախտում կատարած կազմակերպությունների վերաբերյալ նշումներին և իրենց հաճախորդներին հարցում անել պոտենցիալ անճշտությունների վերաբերյալ:[77] Որոշ երկրներում տարբեր տեղեկատվական բազաների միջև համադրումը կատարվում է ավտոմատացված համակարգերի միջոցով, իսկ որոշ պետություններ ստեղծում են սև ցուցակներ, որտեղ հայտնված անձինք իրավունք չունեն ձեռք բերելու կամ օտարելու մասնակցություն և իրական շահառուների տվյալները համադրվում են նաև այդ ցուցակների հետ:[78]

89. Հաջորդ միջոցը կասկածելի օրինաչափությունների և հատկանիշների արձանագրումն է (**red flags**). օրինակ՝ նույն էլեկտրոնային հասցեի, բանկային քարտի օգտագործումը մի քանի իրավաբանական անձանց համար, որոնք առաջին հայացքից փոխկապակցված չեն:[79] Այդպիսի ազդակներ հայտնաբերելու դեպքում տեղեկությունները կարող են փոխանցվել իրավասու մարմիններին քննություն իրականացնելու համար:

90. Այլ միջոցների ցանկում են ընթացիկ ստուգումները, պետական մարմինների միջև շարունակական համագործակցությունը, ինչպես նաև մասնավոր անձանց և քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող վերահսկողությունը, օրինակ՝ որոշ պետություններ պահանջում են հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն իրականացնող անձանց ծանուցել հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ:[80]

91. Այդպես օրինակ **Գերմանիայի օրենսդրությամբ** բոլոր իրավասու պետական մարմինները և ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության ներքո հաշվետվություն տրամադրող անձինք, որոնք ունեն հասանելիություն իրական շահառուների ռեգիստրին, պարտավոր են ծանուցել ռեգիստրում պահվող տվյալներում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ և տրամադրել իրական շահառուների բացահայտման վերաբերյալ իրենց հասանելի

[76] FATF (2019), Best Practices on Beneficial Ownership for Legal Persons, FATF, Paris, 44, www.fatf-gafi.org/publications/documents/beneficial-ownership-legal-persons.html.
[77] *ibid.*
[78] *ibid.*
[79] *ibid.*
[80] *ibid, 45.*

տեղեկությունները:[81] Ծանուցումը ներկայացվում է էլեկտրոնային համակարգի միջոցով[82] և անմիջապես ուսումնասիրվում է գործակալության կողմից:[83] Գործակալությունը ուսումնասիրության արդյունքները տրամադրում է իրավախախտման համար հետապնդում իրականացնելու իրավասություն ունեցող մարմնին, եթե հանգում է հետևության, որ տվյալները ճշգրիտ չեն կամ եթե անհնար է համարում ավարտել ուսումնասիրությունը պայմանավորված իրավիճակի բարդությամբ:[84]

92. Ընդ որում, հաշվետվություն տրամադրող անձանց և ռեգիստրի հարաբերակցությունը կարգավորելիս կարևոր է համոզվել, որ բաց ռեգիստրի առկայության պայմաններում հաշվետվություն տրամադրող անձինք շարունակեն անկախ կերպով կատարել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն: Այդպես, **Ավստրիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ հաճախորդի իրական շահառուների հայտնաբերման պարտականության կատարման համար հաշվետվություն ներկայացնող անձինք չեն կարող հիմք ընդունել միայն ռեգիստրում հրապարակված տեղեկությունները և պարտավոր են իրականացնել անկախ ուսումնասիրություն:[85]

93. Հայտարարագրված տեղեկությունների ճշգրտության հիմնավորման տեսանկյունից պետությունները հաճախ ընտրում են ընկերության վրա բոլոր հիմնավորող փաստաթղթերի պահպանման և այդ փաստաթղթերը իրավասու մարմիններին ցանկացած պահի հասանելի դարձնելու պարտականություն դնելու տարբերակը:

94. Այդպես, **Սլովակիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ հայտարարագիր ներկայացնող իրավաբանական անձը պարտավոր է թղթային կամ էլեկտրոնային եղանակով պահպանել արդիական տեղեկություններ իրական շահառուի անձնական տվյալների և իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ առնվազն հինգ տարվա ընթացքում այն պահից, երբ անձը դադարում է լինել իրական շահառու:[86] Եթե իրական շահառուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները առկա չեն պետական ռեգիստրում կամ առկա տեղեկությունները կասկածներ են հարուցում, ապա օրենքով նախատեսված պետական մարմինների (իրավապահ, հարկային

[81] German Money Laundering Act (2017), § 23a (1).
[82] *ibid,* § 23a (2).
[83] *ibid,* § 23a (3).
[84] *ibid,* § 23a (4).
[85] Austrian Beneficial Owners Register Act (2017), §11 (1)
[86] Slovakian Act on Protection against Money Laundering and on Protection against Terrorist Financing and on Amendments to Certain Acts (2015), § 10a, (1) and (2).

մարմիններ, կենտրոնական բանկ, դատարան և այլն) հարցման հիման վրա, իրավաբանական անձը պարտավոր է տրամադրել հայցվող տեղեկատվությունը:[87]

95. **Նորվեգիայի օրենսդրությամբ** նախատեսվում է, որ հայտարարագիր ներկայացնող անձը պարտավոր է փաստաթղթավորել իրական շահառուների նույնականացման հիմքերը:[88] Եթե հայտարարագիր ներկայացնող անձը հավատում է, որ իրավաբանական անձը չունի իրական շահառու, ապա նշվածը պետք է հիմնավորվի և փաստաթղթավորվի:[89] Եթե հայտարարագիր ներկայացնող անձը հավատում է, որ կան մեկ կամ մի քանի իրական շահառուներ, ում անհնար է նույնականացնել, այդ գնահատականը պետք է հիմնավորվի և փաստաթղթավորվի:[90] Նշված փաստաթղթերը ենթակա են պահպանման տասը տարի այն պահից, երբ անձը դադարում է լինել իրական շահառու[91] և ենթակա են տրամադրման պետական մարմնի պահանջով:[92]

96. Համարժեք կարգավորումներ են նախատեսված նաև **Ավստրիայի օրենսդրությամբ,**[93] որտեղ ռեգիստրը վարող մարմինը կարող է տեղեկություններ և փաստաթղթեր պահանջել ոչ միայն հայտարարագիրը ներկայացրած անձից, այլ նաև իրական շահառուներից:[94]

97. Փաստաթղթերի պահպանման և ըստ պահանջի ներկայացման պարտականություններ են նախատեսված նաև **Շվեդիայի,**[95] **Դանիայի**[96] **և Գերմանիայի**[97] **օրենսդրությամբ:**

98. **Բելգիայի** կենտրոնական ռեգիստրում չնայած պարտականության բացակայությանը կցել հայտարարագիրը հիմնավորող փաստաթղթեր համակարգը թույլ է տալիս հայտարարագիրը ներկայացնող անձին ըստ ցանկության կցել հիմնավորող փաստաթղթեր, օրինակ՝ ընկերության կառուցվածքի գծապատկերներ կամ ցանկացած այլ բնույթի փաստաթղթեր, որոնք հայտարարագիր ներկայացնող անձը կգնահատի օգտակար հայտարարագիրը հասկանալու համար:[98]

---

[87] *ibid*, § 10a, (3).
[88] Norwegian Act on the register of beneficial owners (2019), § 4. (3).
[89] *ibid*.
[90] *ibid*.
[91] *ibid*, § 6.
[92] *ibid*, § 7.
[93] Austrian Beneficial Owners Register Act (2017), §3 (2).
[94] *ibid,* §14 (4).
[95] Swedish Act on the Registration of Beneficial Ownership (2017), Chapter 2, Section 1 and 2.
[96] Danish Public Limited Companies Act (2015), § 58 a (5) and (6).
[97] German Money Laundering Act (2017), § 23a (3).
[98] Service Public Fédéral Finances, Trésorerie, FAQ : Registre UBO, Mis à jour au 19 juillet 2019, 31.

99. Ամփոփելով նշվածը կարելի է արձանագրել, որ տեղեկությունների ստուգման նախնական և ընթացիկ մեխանիզմները հիմնված են պետական մարմինների, հաշվետվություն տրամադրող անձանց և քաղաքացիական հասարակության շարունակական համագործակցության և ընթացիկ արդյունավետ վարչարարության վրա: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է.

I. Նախատեսել հայտարարագիրը ներկայացնող անձի և իրական շահառու անձանց ինքնության և անձնական տվյալների նախնական ստուգում պետական տվյալների բազաների հետ համադրմամբ կամ վավերացված անձը հաստատող փաստաթղթերի միջոցով,

II. Նախատեսել իրական շահառուների ռեգիստրին հասանելիություն ունեցող իրավասու պետական մարմինների պարտականությունը ծանուցել ռեգիստրում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ՝ տրամադրելով իրենց հասանելի տեղեկությունները,

III. Նախատեսել հայտարարագիր ներկայացնող անձի պարտականությունը փաստաթղթավորել իրական շահառուների հայտնաբերման գործընթացը և պահպանել իրական շահառուին առնչվող փաստաթղթերը առնվազն հինգ տարի այն պահից, երբ անձը դադարում է համարվել իրական շահառու,

IV. Նախատեսել հայտարարագիր ներկայացնող անձի պարտականությունը իրավասու պետական մարմինների պահանջով վերջիններիս անհապաղ հասանելի դարձնել ներկայացված հայտարարագիրը հիմնավորող փաստաթղթերը, եթե դա անհրաժեշտ է տվյալ մարմնի լիազորությունների իրականացման համար:

viii. Տեղեկությունների պետական գրանցումը և պարբերական թարմացումները

100. Ապահովելու համար որպեսզի իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները լինեն արդիական, պետությունները պետք է պահանջեն, որ իրավաբանական անձինք իրականացնեն ընթացիկ հայտարարագրում:[99] Որոշ պետություններ այս նպատակին հասնելու համար նախատեսում են ռեգիստրում պահվող տեղեկությունների տարեկան թարմացման պահանջ, ինչը նաև որոշ պետություններում թույլ է տրվել ներդնել ժամկետների բացթողնման դեպքերի

[99] FATF (2019), Best Practices on Beneficial Ownership for Legal Persons, FATF, Paris, 40, www.fatf-gafi.org/publications/documents/beneficial-ownership-legal-persons.html.

ավտոմատ արձանագրման մեխանիզմներ:[100] Այդպիսով, **ՖԱԹՖ** կողմից բազմաշահառու մոտեցման շրջանակներում խորհուրդ է տրվում, որ իրավաբանական անձինք իրական շահառուների վերաբերյալ տվյալները թարմացնեն ինչպես տարեկան հիմունքներով, այնպես էլ գրանցված տվյալների փոփոխվելուց հետո անհապաղ:[101]

101. Իրական շահառուների արդիական տվյալների հայտարարագրման պարտականությունը կատարելու համար էական է իրավաբանական անձանց համար իրենց իրական շահառուների հայտնաբերման պարտականության նախատեսումը, որը պետք է զուգակցվի իրավաբանական անձի մասնակիցների և իրական շահառուների պարտականությամբ իրավաբանական անձին տրամադրելու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունների իրական շահառուների բացահայտման համար: Էական է նաև ռեգիստրում գրանցված տեղեկությունների թարմացման ողջամիտ և վերահսկելի ժամկետների նախատեսումը:

102. Այդպես, **Գերմանիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ կազմակերպության իրական շահառու մասնակիցները և այն մասնակիցները, որոնք վերահսկվում են կազմակերպության իրական շահառուների կողմից պարտավոր են կազմակերպությանը տրամադրել անհրաժեշտ տվյալներ հայտարարագրման պարտականությունը կատարելու համար և անմիջապես ծանուցեն տրամադրված տվյալների փոփոխության վերաբերյալ:[102] Եթե կազմակերպությունը չի ստանում ոչ մի ծանուցում իր իրական շահառուներից, այն պարտավոր է իր մասնակիցներից պահանջել կազմակերպության իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների ներկայացում, իսկ մասնակիցները պարտավոր են նշված պահանջը ստանալուց հետո ողջամիտ ժամկետներում պատասխանել հարցմանը:[103] Կազմակերպությունը պարտավոր է փաստաթղթավորել այս գործընթացը և պահպանել այդ փաստաթղթերը:[104]

103. Նույն կերպ, **Ավստրիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ իրավաբանական անձի կողմից առնվազն տարին մեկ անգամ պետք է իրականացվի իր իրական շահառուների բացահայտման նպատակով պատշաճ ուսումնասիրություն,[105] իսկ իրավաբանական անձի սեփականատերերը և իրական շահառուները պարտավոր են իրավաբանական անձին տրամադրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները իրավաբանական անձի կողմից իր

---

[100] *ibid.*
[101] *ibid, 23.*
[102] German Money Laundering Act (2017), § 20 (3).
[103] *ibid,* § 20 (3a).
[104] *ibid.*
[105] Austrian Beneficial Owners Register Act (2017), §3 (3).

պատշաճ ուսումնասիրության պարտականությունները կատարելու համար:[106] Իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններն արդիական պահելու պարտականության առնչությամբ Ավստրիայի օրենսդրությունը նախատեսում է, որ իրավաբանական անձինք պարտավոր են իրենց իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները ներկայացնել իրավաբանական անձի գրանցման պահից չորս շաբաթվա ընթացքում:[107] Փոփոխությունները ենթակա են ծանուցման չորս շաբաթվա ընթացքում դրանց մասին իմանալու պահից:[108] Տարեկան հետազոտությունների արդյունքներով իրավաբանական անձը պարտավոր է ծանուցել հայտնաբերված փոփոխությունների մասին կամ հաստատել արդեն իսկ հայտարարագրված տվյալները տարեկան հաշվետվության հաստատման պահից չորս շաբաթվա ընթացքում:[109]

104. **Դանիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ իրավաբանական անձը պետք է գրանցի իր իրական շահառուների վերաբերյալ տվյալները և դրանց փոփոխությունները հնարավորինս սեղմ ժամկետներում այն պահից, երբ վերջիններիս ինքնությունը կամ տվյալների փոփոխությունը հայտնի է դառնում կազմակերպությանը:[110] Իրավաբանական անձինք պարտավոր են առնվազն տարին մեկ անգամ իրականացնել հետազոտություններ բացահայտելու համար փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել գրանցված տեղեկությունների առնչությամբ, իսկ հետազոտության արդյունքները ներկայացվում են տարեկան ժողովին, որի ընթացքում իրավաբանական անձի կենտրոնական մարմինը հաստատում է տարեկան հաշվետվությունը:[111]

105. **Շվեդիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ իրավաբանական անձը պարտավոր է ընկերությունների պետական գրանցման գործակալություն ներկայացնել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ չորս շաբաթվա ընթացքում իր գրանցման պահից:[112] Տեղեկությունների փոփոխման դեպքում իրավաբանական անձը պետք է ծանուցի գործակալությանը անմիջապես այդպիսի փոփոխությունների տեղի ունենալու մասին իմանալուց հետո:[113]

106. Ի տարբերություն իրավաբանական անձի գրանցումից հետո իրական շահառուների մասին հայտարարության ներկայացման մոդելի, **Սլովակիայի**

---

[106] *ibid*, §4.
[107] *ibid*, §5 (1).
[108] *ibid.*
[109] *ibid.*
[110] Danish Public Limited Companies Act (2015), § 58 a (3).
[111] *ibid,* § 58 a (4).
[112] Swedish Act on the Registration of Beneficial Ownership (2017), Chapter 2, Section 3.
[113] *ibid.*

օրենսդրությունը պահանջում է, որ այն դեպքում, երբ իրավաբանական անձի գրանցումը պայմանավորված է իրական շահառուների հայտարարության ներկայացմամբ, այդպիսի հայտարարությունը ներկայացվի իրավաբանական անձի գրանցման փաստաթղթերի հետ մեկտեղ:[114]

107. **Բելգիայի օրենսդրությունը** նախատեսում է, որ իրավաբանական անձանց առանձին կազմակերպահիրավական տեսակները կանոնակարգող օրենքներով նախատեսված ժամկետներից անկախ (մեկ ամիս փոփոխությունների գրանցման համար),[115] իրավաբանական անձինք պետք է թարմացնեն իրենց իրական շահառուների վերաբերյալ ռեգիստրում առկա տվյալները առնվազն տարին մեկ անգամ:[116]

108. Ամփոփելով վերոնշյալը՝ կարել է արձանագրել, որ թարմացման պարտականության նախատեսումը ենթադրում է ինչպես իրավաբանական անձի կողմից իրական շահառուների վերաբերյալ տվյալների պարբերական վերանայման, այնպես էլ ընթացիկ և տարեկան գրանցումների իրականացման պարտականությունների նախատեսում: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է.

I. *Նախատեսել իրավաբանական անձի պարտականությունը առնվազն տարին մեկ անգամ իրականացնելու պատշաճ ուսումնասիրություն իր իրական շահառուներին բացահայտելու նպատակով՝ փաստաթղթավորելով գործընթացը,*

II. *Նախատեսել իրավաբանական անձի մասնակիցների և իրական շահառուների պարտականությունը պատասխանելու իրավաբանական անձի հարցումներին, և իրական շահառուների կազմում փոփոխությունների դեպքում իրավաբանական անձին ծանուցելու դրա մասին՝ տրամադրելով բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթերը հայտարարագրման պարտականությունը կատարելու համար,*

III. *Նախատեսել իրական շահառուների կազմում փոփոխությունների դեպքում ընթացիկ թարմացումներ ներկայացնելու պարտականություն և տարեկան հայտարարագիր կամ նախորդ տարվա հայտարարագրի արդիականության հաստատում ներկայացնելու պարտականություն:*

---

[114] Slovakian Act on Protection against Money Laundering and on Protection against Terrorist Financing and on Amendments to Certain Acts (2015), §3a.
[115] Service Public Fédéral Finances, Trésorerie, FAQ : Registre UBO, Mis à jour au 19 juillet 2019, 7.
[116] Arrêté royal relatif aux modalités de fonctionnement du registre UBO (2018), Article 5.

ix. Խախտման համար նախատեսվող սանկցիաները և դրանց կիրառումը

109. **ՖԱԹՖ** կողմից իրական շահառուների ինստիտուտի կայացման համար էական է համարվում արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ սանկցիաների ներդրումը, ինչը կարող է արտահայտվել ինչպես գործարար հարաբերությունների կամ իրավաբանական անձի գրանցման մերժմամբ, այնպես էլ վարչական և քրեական սանկցիաների կիրառմամբ:[117]

110. Պատասխանատվության միջոցները կարող են առնչվել ինչպես հայտարարագրելու պարտականություն ունեցող իրավաբանական անձին, այնպես էլ իրավաբանական անձի անունից հանդես եկող կառավարման մարմինների անդամներին:

111. Արարքները, որոնց համար նախատեսվում է պատասխանատվություն կարող են ներառել իրական շահառուների հայտարարագրման առնչությամբ օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները: Այդպես օրինակ՝ **Ավստրիայի օրենսդրությունը,** ի թիվս այլնի, պատասխանատվություն է նախատեսում հետևյալ արարքները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ կատարելու համար՝

- Կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելը,
- Երկու անգամ ծանուցվելուց հետո հայտարարագիր չներկայացնելը,
- Չորսշաբաթյա ժամկետում փոփոխությունները չգրանցելը,
- Պատշաճ ուսումնասիրության պարտականության արդյունքում հավաքված տեղեկությունների և փաստաթղթերի կրկնօրինակները չպահելը:[118]

112. Ընդ որում, էական է իրավաբանական անձի բարեխղճությունը, այսինքն իրավաբանական անձի կողմից իր իրական շահառուներին բացահայտելու ուղղությամբ պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու գործընթացը, նույնիսկ եթե դրա արդյունքներով հնարավոր չի լինում հայտնաբերել իրավաբանական անձի բոլոր իրական շահառուներին: Քանի դեռ իրավաբանական անձը կատարել է իր պատշաճ ուսումնասիրության պարտականությունը և փաստաթղթավորել է այդ գործընթացը վերջինս չի կարող ենթարկվել պատասխանատվության միայն նրա համար, որ իրական շահառուներ չեն հայտնաբերվել կամ չեն հայտնաբերվել բոլորը:

---

[117] FATF (2019), Best Practices on Beneficial Ownership for Legal Persons, FATF, Paris, 65, www.fatf-gafi.org/publications/documents/beneficial-ownership-legal-persons.html.
[118] Austian Beneficial Owners Register Act (2017), §15.

113. Հարկ է նշել, որ պատասխանատվություն կարող է նախատեսվել ինչպես իրավաբանական անձի, այնպես էլ նրա ներկայացուցիչների համար: Այդպես օրինակ, **Ֆրանսիայի օրենսդրությունը** իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու, ինչպես նաև հայտարարագրում կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներառելու համար նախատեսում է պատասխանատվություն՝

- Իրավաբանական անձի ներկայացուցչի համար՝ վեց ամիս ազատազրկում և 7500 եվրո տուգանք, կառավարման գործառույթներ իրականացնելու արգելք, քաղաքական և քաղաքացիական իրավունքների սահմանափակում,[119]
- Իրավաբանական անձի համար՝ 37500 եվրո տուգանք, հարկադիր լուծարում, դատական վերահսկողության սահմանում, կարգավորվող շուկաներում վաճառքի արգելք և այլն:[120]

114. Որոշ պետություններում պատասխանատվություն է նախատեսվում նաև անձանց համար, ովքեր չեն աջակցում իրավաբանական անձի հայտարարագրման պարտականության կատարմանը: Այդպես օրինակ՝ **Իռլանդիայի օրենսդրությունը** նախատեսում է պատասխանատվություն այն անձանց համար, որոնց իրավաբանական անձը ծանուցում է իրական շահառու հանդիսանալու կասկածով և որոնք օրենքով նախատեսված կարգով չեն պատասխանում և տրամադրում հայցող տեղեկությունները:[121] Իրավաբանական անձի իրական շահառուների համար նմանօրինակ պատասխանատվություն է նախատեսվում սահմանել նաև **Ֆրանսիայի օրենսդրությամբ**:[122]

115. Կիրառվող սանկցիաները տարբերվում են տարբեր պետություններում և դրանց շարքում են՝

- Նախազգուշացում,
- Իրավաբանական անձի և/կամ պատասխանատու ֆիզիկական անձանց տուգանում,[123]
- Իրավաբանական անձի հարկադիր լուծարում,

---

[119] Code monétaire et financier français, Article L574-5.

[120] *ibid*.

[121] S.I. No. 110/2019 - European Union (Anti-Money Laundering: Beneficial Ownership Of Corporate Entities) Regulations 2019, Regulation 7.

[122] Le nouveau régime de déclaration des bénéficiaires effectifs, 25 mars 2020, <https://www.nomosparis.com/le-nouveau-regime-de-declaration-des-beneficiaires-effectifs/>

[123] Գերմանիայի օրենսդրությամբ իրավաբանական անձի նկատմամբ տուգանքը նշանակվում է շրջանառության տոկոսի չափով պատժի համաչափությունը և արդյունավետությունը ապահովելու համար.

- Իրավաբանական անձի պետական գնումներին մասնակցելու արգելք,
- Իրավաբանական անձի լիցենզիայի դադարեցում,
- Իրավաբանական անձի գրանցման հեռացում ռեգիստրից,
- Իրավաբանական անձի շահույթ բաշխելու, պայմանագրեր կնքելու, արժեթղթեր ցուցակելու և այլ իրավունքների կասեցում,
- Իրավախախտման մասին որոշման հրապարակում էլեկտրոնային հարթակում,
- Պատասխանատու ֆիզիկական անձանց ազատազրկում,
- Պատասխանատու ֆիզիկական անձանց որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելք,
- Պատասխանատու ֆիզիկական անձի իրավունքների սառեցում կամ հեռացում իրավաբանական անձի կառավարման մարմիններից:[124]

116. Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ արդյունավետ սանկցիաների նախատեսումը ինչպես իրավաբանական անձի, այնպես էլ նրա ներկայացուցիչների և իրական շահառուների արարքների առնչությամբ էական է իրական շահառուների բացահայտման ինստիտուտի հաջողության համար: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է՝

I. Նախատեսել իրավաբանական անձի վարչական պատասխանատվություն իրական շահառուների հայտարարագիրը սահմանված ժամկետներում չներկայացնելու կամ հայտարարագրերի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների կամ ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու կամ հայտարարագրերում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու կամ պատշաճ ուսումնասիրություն չկատարելու կամ պատշաճ ուսումնասիրության փաստաթղթերը օրենքով նախատեսված ժամկետով չպահպանելու համար՝ տուգանքի տեսքով,

II. Պետական ռեգիստրին տալ իրավազորություն նշված դեպքերում իրականացնելու վարչական վարույթ և համապատասխան սուբյեկտներին ենթարկելու վարչական պատասխանատվության, իսկ հանցագործության հատկանիշների առկայության կասկածների դեպքում նախատեսել տեղեկությունները դատախազություն փոխանցելու պարտականություն,

III. Նախատեսել իրավաբանական անձի իրական շահառուների և մասնակիցների (նրանց անունից գործող ֆիզիկական անձանց)

[124] Տե՛ս ընդհանուր՝ KPMG International, UBO disclosure requirements within the EU Global Legal Services (as of 1 January 2019).

քրեական պատասխանատվություն իրական շահառուների բացահայտման վերաբերյալ իրավաբանական անձի հարցումներին օրենքով նախատեսված ժամկետներում չպատասխանելու կամ դիտավորությամբ կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար՝ տուգանքի տեսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով,

IV. *Նախատեսել իրավաբանական անձի անունից գործող ֆիզիկական անձի քրեական պատասխանատվություն իրական շահառուների հայտարարագրում դիտավորությամբ կեղծ կամ ոչ ամբողջական տվյալներ ներառելու համար՝ տուգանքի տեսքով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով,*

V. *Նախատեսել իրավաբանական անձին լուծարելու հնարավորություն, եթե վերջինս երեք տարի անընդմեջ չի ներկայացնում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր կամ այլ կերպ կոպիտ խախտում է իրական շահառուների բացահայտման կանոնները:*

2. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԱՆՁԻՆՔ

117. Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

3. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

118. Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ստեղծել իրավաբանական անձանց իրական շահառուների բաց և հանրամատչելի ռեեստր, որը կգործի իրական շահառուների բացահայտման նոր օրենսդրական համակարգի հիման վրա: Նոր համակարգի ներքո ակնկալվում է ապահովել այնպիսի տվյալների մշակում, որոնք համադրելի են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրության կարգավորումների ներքո մշակվող տվյալների հետ, ինչպես նաև ներդնել իրական շահառուների տվյալների արժանահավատության ապահովման նոր արդյունավետ մեխանիզմներ: